

յետոյ իր համոզումը փոխած և յարած է քաղկեդոնականութեան: Մարկիանոս ջո՛րչափ հաւատարիմ կը մնայ Ախաբնակութեան, իր վանքը շէն և ճոխ էր, և ո՛ւր հարիւրաւոր վանականներ կը բնակէին իր տեսչութեան տակ. բայց յետոյ իր վանքը ինկաւ չքաւորութեան մէջ և անշքացաւ: Սկիւթուպոլսեցիին երկու դէպքեր ևս կը պատմէ, և այդ առթիւ կը յիշէ «Հովուանոց»ը. առաջինով՝ կը պատմէ Տէյր-Տօզի վանքին հիմնադիր Ս. Թէոդորոսի այցելութիւնը Հովուանոցին, որ կը գտնուէր Տէյր Տօզի վանքին եւ Բեթղեհէմի միջեւ. իսկ երկրորդով՝ Թեկուայի վանքն ապաստանած Որոզինէստոն վանականաց մէկ արարքք. 542ին նոյն վանականները, զէն ի ձեռին, կ'ուզէին քանդել Մար-Սապայի վանքը. բայց անոնք չկրցան հասնիլ իրենց նպատակին. և շատ մը դեգերումներէ յետոյ, յոգնած՝ ապաստանեցան «Երանելի Մարկիանոսի վանքը»: դարձեալ, ըստ նոյն պատմչին, Մարկիանոս վախճանած է 492ին: 542էն վերջ Հովուանոցի նկատմամբ պատմական յիշատակութիւն չենք գտներ օտար եկեղեցական մատենագրաց քով: Հաւանաբար այդ վանքը 614ին կիսաքանդ եղած է պարսկական յարձակումներու ատեն:

### 3. Հովուանոցի եկեղեցւոյն սեղւոյն նկատմամբ սարակարծութիւն.

Պաղեստինադէտներէն Մէսթէրման՝ յետ մահու հրատարակուած իր մէկ ուսումնասիրութեան մէջ («La Terre Sainte, 1923») կ'եզրակացնէ թէ Հովուաց դաշտի եկեղեցիին Ս. Գրոց Գաղիլայ աշտարակին (Մնուկոյ, ԼԵ. 21) մօտն էր, և դաշտն ալ կը կոչուէր Սիւր կը-Ղանկել: Տէյր էր-Ռուաթը բուն «Հովուանոց»ը չէր, այլ ան Հուութի վանքն էր, որմէ Սիւր կը-Ղանկել 600 քայլ հեռի կը գտնուէր, զէպի արեւելեան հիւսիս: Մէսթէրման այլ եւ այլ վկայութիւններ յառաջ կը բերէ իր այս ճշտումը հաստատելու համար, և կը յարէ թէ Գաղիլայ աշտարակի «Հովուանոցին» մէջ կ'ապրէր 385ին արքա Յովհաննէս Կասիանոս, ինչպէս ինքն ալ կը յիշատակէ իր Մարսէլյ գրած մէկ ձառին մէջ. 388ին ալ դարձեալ հո՛ն կը բնակէր «Վարք Հարանց»ի հեղինակ Բալլատիսը: Մէսթէրման յետոյ մէջ կը բերէ Ե. դարու սաղիմական վրացիներէն նորագիւտ ծխարանը, որուն համաձայն Եր-